ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼԻ
ՀԱՐՑԱՇԱՐ - 11-րդ դասարան - 90 րոպե

1. Ո՞ր պնդումն է սխալ Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակի վերաբերյալ:
1) «Սպանված աղավնին» վիպակը թարգմանություն է:
2) «Սպանված աղավնին» վիպակի հերոսները դժբախտ են յուրովի:
3) Վիպակը հայ գրականության մնայուն էջերից է:
4) Վիպակի հերոս Ռուբեն Թուայանը դառնում է անհույս հարբեցող և կասկածելի փաստաթղթեր լրացնելով՝ քարշ է տալիս իր գոյությունը:

2. Ո՞ր պնդումն է սխալ Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի վերաբերյալ:
1) «Մեր Թաղը» պատմվածաշարի գլխավոր հերոսը կարիքն է:
2) Պատմվածաշարի բոլոր հերոսները սոցիալական ծանր պայմանների և սնահավատության զոհեր են:
3) «Նեղ օրերից մեկը » նորավեպի հերոսը ընդվզում է խմբագրի դեմ և հեռանում:
4) Սաքուլը միջավայրի սնոտիապաշտության, տգիտության և իր անճարականության զոհն է:

3. Պնդումներից ո՞րն է սխալ Գրիգոր Զոհրապի «Զաբուղոն» նորավեպի վերաբերյալ:
1) Նորավեպում քննվում է մարդու բարոյական գեղեցկության խնդիրը:
2) Զաբուղոնը սովորական անճարակ գող է, որ բռնվում է ոստիկանների կողմից և բանտ նետվում:
3) Զաբուղոնն ունի մի նվիրական ու թաքուն աշխարհ. նա ապրում է երջանիկ սիրո զգացումներով:
4) Վասիլիկին այլևս չի բավարարում թաքուն սերը. նա ուզում է՝ իր սիրո մասին բոլորն իմանան:

4. Ո՞ր պնդումն է ճիշտ Գրիգոր Զոհրապի «Ճիտին պարտքը» նորավեպի վերաբերյալ:
1) Նորավեպում արտացոլված են մարդկային ողբերգության սոցիալական ակունքները:
2) Հուսեփ աղան հաղթահարում է դժվարությունները և դառնում նախկին վաճառականը:
3) Հուսեփ աղայի աղջիկները հասկանում են հոր անելանելի վիճակը և աշխատում սփոփել նրան:
4) Հուսեփ աղան դեն է նետում իր կաշվե պայուսակը, որովհետև այն այլևս զրկանքի ու կարիքի խորհրդանիշ չէ:

5. Պնդումներից ո՞րն է սխալ Գրիգոր Զոհրապի «Երջանիկ մահը» նորավեպի վերաբերյալ:
1) Նորավեպը շոշափում է կյանքի և մահվան, սիրո և երջանկության հավերժական խնդիրը:
2) Զոհրապը նրբորեն բացահայտում է մարդկային ձգտման և կնոջ ներաշխարհի ու հոգեբանության բարդ խնդիրը:
3) Հերոսուհին , իմանալով -իր հիվանդության մասին, որոշում է ապրել ինչպես հաճելի է իրեն:
4) Հերոսուհին մեկուսանում է իր սիրած հասարակությունից և մեռնում անհայտության մեջ:

6. Ո՞ր պնդումն է սխալ Գրիգոր Զոհրապի «Այինկա» նորավեպի վերաբերյալ:

1) Նորավեպի հերոսուհի Պերճուհին ամուսնանում է Հակոբոսի հետ և Սահակի՝ պետության կողմից տրվող թոշակով երջանիկ ապրում:
2) Սահակը ծառայության է մտել ոստիկանություն , և գյուղի մարդիկ դատապարտում են նրան:
3) Նորավեպը քննում է «եղբայրը եղբոր դեմ՝ գործի մեջ և երջանկության ճանապարհին՝ անձնական կյանքում » հարցերը:
4) Միրո ցավի մեջ Սահակն անտարբեր է դառնում կյանքի ու մահվան նկատմամբ:

7. Պնդումներից ո՞րն է սխալ Գրիգոր Զոհրապի կենսագրության վերաբերյալ:

1) Զոհրապը պոլսահայ միջավայրին բոլորովին անտարբեր փաստաբան էր:
2) Զոհրապը ամեն ինչ անում է՝ փրկելու իր հայրենակիցներին ու գրչակից ընկերներին:
3) Որպես իրավաբան և ճարտասան, հասարակական գործիչ ու «Նորավեպի իշխան» Զոհրապը ձեռք է բերում մեծ համբավ:
4) Զոհրապը համարձակորեն հաշիվ է պահանջում ոճրագործ Թալեաթ փաշայից:

8. Ո՞ր պնդումն է սխալ Հովհաննես Թումանյանի հասարակական –գրական գործունեության վերաբերյալ:

1) Թումանյանը մշտապես հետևել է իր սկզբունքին՝«Ամենից առաջ ամեն մի բանաստեղծ իր ժողովրդի սիրտը պետք է լինի»:
2) Թումանյանը մշտապես կանգնել է իր ժողովրդի պաշտպանության դիրքերում:
3) Թումանյանի եռանդուն ջանքերով ստեղծվում են մի շարք ընկերություններ՝ «Հայ գրողների կովկասյան ընկերություն», «Վերնատուն» գրական խմբակը:
4) Թումանյանը անտարբեր էր Էջմիածնի պատերի տակ մեռնող գաղթական մանուկների նկատմամբ:

9. Ո՞ր պնդումն է սխալ Թումանյանի «Հառաչանք» պոեմի վերաբերյալ:

1) «Հառաչանք»-ի ծերունին հնազանդությամբ էր ընդունում պետության վարած քաղաքականությունը:
2) Չոբան Չատին իր մահակով սպանում է թավադին:
3) «Բաց արին տեսան՝ գրած զակոնում , թե չոբան Չատին Սիբիր է գնում»:
4) Պոեմի վերնագիրը՝ «Հառաչանք» լիովին համապատասխանում է ծերունու հոգեվիճակին:

10. Պնդումներից ո՞րն է սխալ բնութագրում Թումանյանի ստեղծագործությունը:

1) Թումանյանի պոեզիան բաժանվում է երկու մասի՝ քնարական և պատմողական:
2) Թումանյանի բանաստեղծությունների հերոս է դառնում ոչ միայն ժողովրդի ցավերով մտահոգ անհատը,այլև պարզ ու հասարակ մարդը՝ իր երազներով, հույզերով, հոգսերով:
3) Թումանյանի ստեղծագործություններում արծածված են սոցիալական, քաղաքական, փիլիսոփայական, սիրային ու բնապաշտական թեմաներ:
4) Թումանյանը երբեք չդարձավ մի «ժողովրդի ազնիվ կենսագիր»:

11. Պնդումներից ո՞րն է սխալ «Անուշ» պոեմի վերաբերյալ:

1) «Անուշ»-ում հրաշալիորեն արտացոլված են հայ հին կյանքը և ժողովրդի հոգևոր գեղեցկությունները:

2) Սարոն Մոսիին գետնում է, որովհետև տեսնում է քողի հետևից նայող Անուշին և «մոռանում է աղաթը»:

3) Մոսին, սիրելով իր քրոջն ու իր անբաժան ընկեր Սարոյին, ներում է նրանց փախուստը և հաշտվում:

4) Ողբերգական սիրավեպի միջոցով Թումանյանը պատկերել է աղետավոր երևույթներ ու հոգեվիճակներ ծնող նահապետական բարքերն ու սովորույթները:

12. Պնդումներից ո՞րն է ժխտում Թումանյանի «Հին օրհնություն» բանաստեղծության արդիականությունը

1) Պապերի օրհնանքը՝ «Ապրե՛ք , երեխե՛ք, բայց մեզ պես չապրեք » հնացած է:

2) Գյուղի պատանիները այդ պահին չեն հասկանում իրենց տրված օրհնանքը:

3) Պատանիները հետագայում միայն հասկանում են և խաղաղություն մաղթում իրենց պապերին:

4) Բանաստեղծությունը չի համապատասխանում մեր ժամանակների մտածողությանը:

13. Ո՞ր պնդումն սխալ Թումանյանի «Թմբկաբերդի առումը» պոեմի վերաբերյալ:

1) Պոեմն ունի պատմական հիմք:

2) Թումանյանը փառաբանում է լավ գործի անմահության գաղափարը:

3) Նադիր շահի հաղթանակը չի համարվում իրական հաղթանակ:

4) Մատնիչները երբեք չեն պատժվում :

14. Պնդումներից ո՞րն է սխալ Թումանյանի քառյակների վերաբերյալ:

1) Քառյակներում բանաստեղծը ծառանում է մեծ պետությունների արյունալի քաղաքականության դեմ:

2) Քառյակներում Թումանյանը միշտ մնացել է հայրենի եզերքի հետ, տեսել հազար ցավ ու վիշտ:

3) Թումանյանը չունի հայրենակարոտ քառյակներ:

4) Թումանյանի քառյակներում բացակայում են մարդասիրության թեմայով գրված քառյակները:

15. Պնդումներից ո՞րն սխալ Ավետիք Իսահակյանի կենսագրության վերաբերյալ:

1) Իսահակյանը ծնվել է Ղազարապատ գյուղում, որտեղ հայրն ուներ ջրաղաց հեքիաթային պարտեզ:

2) Իսահակյանի կրթությունը չի ավարտվում Հառիճի վանքի և Գևորգյան ճեմարանի հոգևոր ուսումնառությամբ:

3) Իսահակյանի գրական կյանքում վճռորոշ դեր է խաղում բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, որը դասավանդում էր Գևորգյան ճեմարանում:

4) Իսահակյանը իր կյանքի մի շրջան ապրել է Փարիզում՝ հայրենիքից հեռու:

16. Ըստ հաջորդականության նշել Թումանյանի ստեղծագործությունների վերնագրերը:

1. «Անխելք մարդը», 2. «Լիլիթը», 3. «Ռավեննայում», 4. «Հայրենիքիս հետ»,
5. «Աբու-Լալա- Մահարի», 6. «Գլխապտույտ», 7. «Սպանված աղավնին»,
8. «Աղավնու վանքը», 9. «Մրգահաս»:

17. Ըստ հաջորդականության նշել Թումանյանի բալլադները:

1. «Ռավեննայում», 2. «Մոր սիրտը», 3. «Փարվանա», 4. «Սասունցի Դավիթ»,
5. «Պոետն ու մուսան», 6. «Անիծած հարսը», 7. «Ճիտին պարտքը», 8 «Ախթամար»:

18. Ըստ հաջորդականության նշել Գրիգոր Զոհրապի նորավեպերի համարները:

1. «Սաքուլն ուխտ գնաց», 2. «Հոգուն վրա հասավ», 3. «Ծառերը», 4. «Խնկի ծառեր»,
5. «Ռեհան», 6. «Ճեյրան», 7. «Քաջ Նազար», 8. «Նամուս», 9. «Փոստալը»:

19. Ըստ հաջորդականության նշել այն համարները, որոնք պատկանում են Ավետիք Իսահակյանի գրչին:

1. «Հառաչանք», 2. «Ռավեննայում», 3. «Ալագյազի մանիներ»,
4. «Լոռեցի Սաքոն», 5. «Հայրենի տուն», 6. «Անտառում»,
7. «Մայր տաճար», 8. «Երեքնուկ», 9. «Ասպետի սերը»:

20. Ըստ հերթականության նշել Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա-Մահարի» պոեմի տողերի ճիշտ հաջորդականությունը:

1. Բանաստեղծներն են հասկացել դույզն-ինչ և թոթովում են հնչյուններն անմահ,
2. Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով, բյուր հրաշքներով
3. Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝ անդուլ ու անխոնջ՝ այսպես թովչանքով:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան